

ՀՀ Վայոց ձոր մարզպետը մասնակցել է <Տարվա լավագույն համայնք> մրցանակաբաշխությանը

12.11.2012



Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորման 16-ամյակի կապակցությամբ հոկտեմբերի 10-ին անցկացվել է "Տարվա լավագույն համայնք-2012" մրցանակաբաշխությունը, որին ներկա են եղել ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեորգյանը, մարզպետներ, համայնքապետեր, ավագանու անդամներ, ՏԻ ոլորտի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Միջոցառմանը ՀՀ Վայոց ձոր մարզպետ Էդգար Ղազարյանի գլխավորությամբ մասնակցել են մարզային պատվիրակության անդամները՝ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ վարչության պետ Արամ Գրիգորյանը և քաղաքային ու գյուղական շուրջ 10 համայնքների ղեկավարներ:

Փոխվարչապետը շնորհավորել է ՏԻ մարմինների ներկայացուցիչներին՝ Տեղական ինքնակառավարման օրվա կապակցությամբ և արդյունավետ աշխատանք մատուցել՝ ի նպաստ սեփական համայնքների բարեկեցության: Նա առանձնահատուկ ընդգծել է արդյունավետ գործող ՏԻ մարմինների դերը համայնքների զարգացման գործում:

Մրցանակաբաշխությունն անցկացվել է հինգ անվանակարգերով: 2012 թվականի լավագույն քաղաքային համայնք ճանաչվել է Սյունիքի մարզի Ագարակ քաղաքը, լավագույն գյուղական համայնք՝ Շիրակի մարզի Արեւշատ համայնքը: <Մաքուր համայնք> անվանակարգում մրցանակի է արժանացել Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքը, <Մշակութային լավագույն քաղաքային համայնք> անվանակարգում՝ Լոռու մարզի Ալավերդի քաղաքը: Լավագույն կանաչապատ համայնք է ճանաչվել Երեւանը: <Տարվա լավագույն համայնք> մրցանակաբաշխությունն անցկացվում է ՀՀ տարածքային կառավարման նախարարության և <Հայաստանի համայնքների միության> կողմից և կազմակերպվում է 2006 թվականից:

Մրցանակաբաշխության նպատակն է գնահատել տարվա ընթացքում արդյունավետ աշխատած ՏԻՄ-երի գործունեությունը եւ խրախուսել հաջողություններ արձանագրած համայնքներին:

<Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին> ՀՀ օրենքի համաձայն՝ նոյեմբերի 10-ը պաշտոնապես նշվում է որպես Տեղական ինքնակառավարման օր:

Աղբյուրը՝ ՏԿՆ Հասարակայնության հետ կապերի բաժին